ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հուլիսի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

98
(3129)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ նախաքննական մարմինը՝ ի դեմս ՀՀ քննչական կոմիտեի, առաջիկայում ՀՀ-ում ահաբեկչական գործողությունների պլանավորման կամ բոլորին հայտնի «Հեղաշրջման պլան»-ի քրեական վարույթով մաս կառանձնացնի եւ մի քանի մեղադրյալների վերաբերյալ գործերը հապշտապ դատարան կուղարկի:

Հունիսի 25-ին Քննչական կոմիտեն հաղորդագրություն էր տարածել, որի համաձայն՝ «Սրբազան պայքար»-ի մասնակիցները եւ ղեկավարները պլանավորել են ՀՀ-ում ահաբեկչական գործողություններ: Պլանավորմանը մասնակցել են մի շարք անձինք, ներգրավվել են նախկին ոստիկաններ ու զինվորականներ: ՔԿ-ն նաեւ մի շարք ձայնագրություններ էր հրապարակել:

Ի պատասխան ՔԿ պաշտոնական հաղորդագրության՝ մի շարք փաստաբաններ մինչեւ օրս ահազանգում են՝նշելով, որ հրապարակված ձայնագրությունները ամբողջական չեն եւ համատեքստից կտրված են:

Այս վարույթով Բագրատ սրբազանին մեղադրանք է առաջադրվել ահաբեկչություն նախապատրաստելու, զանգվածային անկարգություններ հրահրելու եւ իշխանության բռնազավթման հոդվածներով: Վարույթով կալանավորված է 16 անձ:

Այս ամենից հետո գլխավոր դատախազը եկավ ԱԺ եւ նույն քրեական վարույթի շրջանակում կալանքի տարավ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանին:

Իհարկե արդեն կանխատեսելի է, թե ինչ ավարտ կունենա այս քրեական վարույթը, հատկապես եթե հիշենք, թե որքան են նման շինծու գործերով տարբեր ժամանակներում Փաշինյանի ընդդիմախոսներին ճնշելու, լռեցնելու փորձեր արվել. Արթուր Վանեցյան, Վահրամ Բաղդասարյան, Աշոտ Մինասյան Ալբերտ Բազեյան... Եվ այս շարքը շարունակական է լինելու, քանի Նիկոլ Փաշինյանը անձամբ վարում է իր ֆեյսբուքյան էջը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Աբու Դաբիում Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւի երկկողմ հանդիպմանը ներկա գտնված անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը մերժել է հանդիպել անհետ կորած զինվորների ծնողների հետ: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ծնողները տեւական ժամանակ կապ են հաստատել նրա աշխատակազմի հետ՝ պահանջելով հանդիպում կազմակերպել եւ հասկանալ, թե Աբու Դաբիում իրենց զավակների հարցը բարձրացվել է, թե ոչ: Արդյունքում աշխատակազմից հարցը անտեսել են՝ հետաձգելով այսօր-վաղվա, եւ ավելի ուշ ասել, թե Գրիգորյանը չի կարող ընդունել ծնողներին, ու սլաքները ուղղել են ԱԱԾ թե՝ գնացեք այնտեղ: Ի պատասխան՝ ծնողները զայրացած պնդել են, որ իրենք անձամբ Աբու Դաբի գնացած Գրիգորյանի հետ են ուզում հանդիպել, ինչու են իրենց դրդում գնալ ծայրահեղ քայլերի: Սակայն անվտանգության խորհրդի քարտուղարը այդպես էլ չի ընդունել նրանց: Հիշեցնենք, որ հուլիսի 10-ին Աբու Դաբիում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացի շրջանակում տեղի էր ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւի երկկողմ հանդիպումը: Հայկական կողմից հանդիպմանը մասնակցում էին նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը եւ ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը: Սակայն հանդիպումից ավելի քան մեկ շաբաթ անց դեռ ոչ մի խոսք չկա՝ նրանք անհետ կորած եւ բռնի անհետացած զինծառայողների հարցը որեւէ կերպ քննարկել են, թե ոչ:

Ազգային ժողովում հուլիսի 8-ին տեղի ունեցած ծեծկռտուքի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթի կողմից ներկայացված հաղորդումը ուղարկվել է Երեւանի քաղաքային դատախազություն: Սա նշանակում է, որ Երեւան քաղաքի դատախազ Ռաֆայել Մանուկյանի ձեռքում է, թե հայոյախոս ու ջարդարար ՔՊ-ական պատգամավորները կպատժվեն, թե ոչ: Մենք հաղորդման հետ ներկայացրել ենք մանրամասն նկարագրությամբ տեսանյութ՝ հայտնելով, թե ՔՊ-ականներից ով ինչով է աչքի ընկել հուլիսի 8-ին: Եվ քանի որ հարցի հանգուցալուծումը կախված է դատախազից, կարեւոր է իմանալ, թե ով է Երեւան քաղաքի դատախազ Ռաֆայել Մանուկյանը, ինչ ունեցվածք ունի: Չխախտելով «Ժողովուրդ» օրաթերթի ավանդույթները՝ ներկայացնենք, թե ինչ հայտարարագիր է ներկայացրել Մանուկյանը, որն այս պաշտոնում նշանակվել է 2023 թվականի նոյեմբերին: Վերջինիս կինը՝ Սոնա Առուստամյանը եւս նույն համակարգում է աշխատում. ՀՀ գլխավոր դատախազությունում դատախազի տեղակալ է: Ռաֆայել Մանուկյանը հայտարարագրել է 2 հողամաս Արմավիրի մարզի Փարաքար համայնքում՝ ձեռք բերված 2000 եւ 2002 թվականներին: 2024 թվականին դատախազը գնել է Lexus մակնիշի 2 մեքենա 2022 թվականի արտադրության: Մեքենաներից մեկն արժեցել է 17 մլն 550 հազար դրամ, ձեռք է բերվել անհատից, իսկ մյուս՝ 17 մլն 290 հազար դրամ արժողությամբ մեքենան ձեռք է բերվել «Տոյոտա Երեւան» ՍՊԸ-ից: Հետաքրքիրն այն է, որ անհատից գնած մեքենան դատախազը վաճառել է նույն տարում նույն արժեքով. մյուս մեքենան պահպանվել է տարեվերջին: Դատախազի բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 770 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 7 հազար դոլար եւ 5 մլն 200 հազար դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի՝ Կառավարությանը մոտ կանգնած աղբյուրները փոխանցում են, որ ՆՍՕՍՏ Ամենայն հայոց Կաթողիկոսին հեռացնելու եւ նրան փոխարինող գտնելու օպերացիայի պատասխանատվությունը դրվել է Կառավարության աշխատակազմի վրա: Կառավարության մեր աղբյուրները փոխանցում են, որ հիմնական աշխատանքն իրականացնում է աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը՝ պարբերաբար իրավիճակը ներկայացնելով Փաշինյանին: Ըստ մեր տեղեկությունների՝ Փաշինյանն այդքան էլ գոհ չէ Հարությունյանի աշխատանքից, քանի որ դեռեւս հստակ քայլեր Վեհափառի հեռացման ուղղությամբ չեն արվել. հոգեւորականները պարզապես ավելի են թշնամացել իշխանությունների հետ: Եկեղեցականների շրջանում զայրույթ է առաջացրել Հարությունյանի ֆեյսբուքյան վերջին գրառումը, որտեղ նա հայտարարել է. «Եպիսկոպոսների ստորագրությամբ հայտարարությունը խայտառակություն է եւ արձանագրում, որ Կտրիճ Ներսիսյանը հովանավորում է մեր երկրում ահաբեկչությունը եւ ապապետականությունը»:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՆՈՐ ՈՒԺԸ ՉՊԵՏՔ Է ԱՍՈՑԱՑՎԻ ՆԱԽԿԻՆՆԵՐԻ ՀԵՏ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ArmLur.am-ը զրուցել է արտախորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչ, Աժ նախկին պատգամավոր Անի Սամսոնյանի հետ՝ պարզելու նրա տեսակետը գործարար Սամվել Կարապետյանի՝ կալանավայրից հրապարակված հայտարարության վերաբերյալ:

Հիշեցնենք, որ Կարապետյանը հայտարարել էր. «Ստեղծելու ենք սկզբունքորեն նոր քաղաքական ուժ, գնալու ենք մեր ճանապարհով, մեր նոր թիմով՝ չբացառելով ներքաղաքական համագործակցությունը համախոհների հետ»:

-Տիկին Սամսոնյան, Սամվել Կարապետյանը պաշտոնապես հայտարարում է նոր քաղաքական ուժ ստեղծելու մտադրության մասին, եւ ընդգծում է, որ պատրաստ է համագործակցել գաղափարակից ուժերի հետ, ինչպե՞ս եք գնահատում այս հայտարարությունը: Դուք պատրա՞ստ եք համագործակցել նրա նախաձեռնությանը՝ որպես արտախորհրդարանական ընդդիմադիր գործիչ:

-Հայաստանում թարմ քաղաքական ուժերի կարիք կա՝ հաշվի առնելով քաղաքական լճացած եւ մաշված ներկապնակը: Սոցիալական հարցումները ցույց են տալիս, որ մարդկանց մեծամասնությունը չունի վստահություն կուսակցությունների նկատմամբ: Նախկին նախագահների երկու քաղաքական միավորները փորձում են այդ դաշտում պահել իրենց մոնոպոլ վիճակը, իսկ փոքր արտախորհրդարանական կուսակցությունները մարդ-կուսակցություններից այդպես էլ չաճեցին: Ցանկացած ձեւավորվող նոր քաղաքական ուժ կարող է թարմություն բերել դաշտին: Սամվել Կարապետյանի թիմը պետք է ռեալ գիտակցի՝ ինչի մեջ է մտնում եւ թույլ չտա, որ իրեն ասոցացնեն նախկին նախագահների հետ. իսկ դրա վտանգը կա: Ինչպես Բագրատ Սրբազանին մոլորեցրին ու քաղաքական շարքից հանեցին, այնպես էլ այս դեպքում կարող են անել: Ես դրա ծիլերը հաջակցություն Սամվել Կարապետյանին իրականացվող երթի ժամանակ արդեն տեսա ու զգացի: Բացի դրանից, քաղաքականությունը չի սիրում կոմֆորտ, երկդիմություն եւ անվճռականություն:

Ինչ վերաբերում է ինձ. որպես արտախորհրդարանական ընդդիմադիր գործիչ՝ ես պատրաստ եմ համագործակցել բոլոր նրանց հետ, ում հետ կկիսեմ արտաքին եւ ներքին քաղաքական ընդհանուր նպատակներ:

-Տիկին Սամսոնյան, իշխանությունների կողմից Սամվել Կարապետյանի նկատմամբ իրականացվող ճնշումները, ինչպես նաեւ նրանց դեմ ուղղված գործողությունները, ովքեր կանգնում են նրա կողքին, վկայում են քաղաքական հետապնդումների մասին, ինչպե՞ս եք գնահատում նման զարգացումները, եւ արդյո՞ք այս իրավիճակում համախմբումը դառնում է քաղաքական անհրաժեշտություն:

-Արդեն սկսված քաղաքական հետապնդումները շարունակվելու են, եւ լինելու են նաեւ նոր քաղաքական հետապնդումներ: Նիկոլ Փաշինյանը ընտրություններից առաջ փորձելու է հնարավորինս ճնշել մրցակցային հնարավոր դաշտի ստեղծումը: Նա ունի երկու խնդիր. չեզոքացնել լուրջ մրցակիցներին եւ ուժեղացնել բոլոր այն կուսակցություններին, որոնք պոտենցիալ ունեն ընտրություններին անցնելու պառլամենտ եւ կոալիցիա կազմելու «Քաղաքացիական պայմանագրի» հետ: Մենք այդպիսի օրինակ Երեւանի ավագանու ընտրություններում արդեն տեսել ենք: Գառան դիմակով որպես ընդդիմադիր դիրքավորվում են, հետո օգնում են ՔՊ-ին՝ վերցնելու իշխանությունը: Այդպիսի նոր ուժեր այս ընտրություններում հաստատ լինելու են: Ես բավականին քաղաքական փորձ ունեմ՝ չհավատալու լայն կոնսոլիդացիաներին, որովհետեւ դրանք խոցելի են: Եվ փաստ չէ, որ մեծ համախմբումը կարող է դրական ակումուլյատիվ էֆեկտ տալ ընտրություններում: Մեծ համախմբման գործոնը ավելի կարեւոր է լինելու հետընտրական շրջանում, եթե Նիկոլ Փաշինյանը մեծամասնություն չտանի: Կարծում եմ՝ չի տանի եւ դա արդեն իսկ լավ է:

Զրուցեց ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԳԱԼԱԳԵՐԸ ԱՎԱՐՏՈՒՄ Է ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Հայաստանում Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Գալագերին, որն ավարտում է դիվանագիտական առաքելությունը մեր երկրում:

Այս մասին հայտնում են ՀՀ Կառավարությունից:

Զրուցակիցները գոհունակությամբ նշել են, որ Հայաստանի եւ Միացյալ Թագավորության միջեւ վերջին տարիներին ձեւավորվել է ակտիվ քաղաքական երկխոսություն, ինչը նոր ազդակ է հաղորդել երկկողմ փոխգործակցության զարգացմանը:

Նիկոլ Փաշինյանը այս առումով ընդգծել է դեսպան Գալագերի անձնական ներդրումը եւ շնորհակալություն հայտնել սերտ փոխգործակցության համար:

Կողմերը մտքեր են փոխանակել Հայաստան-ՄԹ հարաբերությունների օրակարգային հարցերի շուրջ, կարեւորել բարձր մակարդակի փոխայցելությունների կազմակերպումը:

Նիկոլ Փաշինյանը դեսպանին մաղթել է հաջողություններ հետագա գործունեության ընթացքում:

ԳԵՂԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ, ՀՀ Աժ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին: Այս մասին հայտնում են ՀՅԴ գրասենյակից:

Արդեն մեկ շաբաթ է անցել այն օրվանից, երբ իրավապահներն առգրավել են Գեղամ Մանուկյանի անձնական բջջային հեռախոսը, որը պարունակում էր անձնական եւ պատգամավորական գործունեությանը վերաբերող տեղեկատվություն:

Խուզարկությունը կատարվել է այն բնակարանում, որը դատարանի որոշմամբ ձեւակերպվել է որպես իր որդու փաստացի բնակության վայր, բայց իրավապահները փորձել են առգրավել նաեւ Մանուկյանի հեռախոսը, ինչը թույլատրված չի եղել դատարանի որոշմամբ: Պատգամավորը հրաժարվել է այն տրամադրել: Ըստ Մանուկյանի՝ այդ մասին տեղյակ է եղել նաեւ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Սակայն, պատգամավորի պնդմամբ, իրավապահները առանձին տարածք են հրավիրել իրեն, եւ ուժ կիրառելով՝ խլել են հեռախոսը՝ պատճառելով թեթեւ մարմնական վնասվածք:

Մանուկյանը նաեւ տեղեկություն ունի, որ փորձ է արվել կոտրել հեռախոսի պաշտպանական համակարգը:

Նրա խոսքերով՝ հեռախոսի արտադրող ընկերությունը, արձագանքելով իրենից եւ մի շարք իրավապաշտպաններից ստացված ահազանգերին, այն արգելափակել է:

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ԱՀԱՋԱՆԳՈՒՄ ԵՆ

«ՀՀ իշխանությունները փաստացի քայլեր են ձեռնարկում՝ ԱՀ ինստիտուտների դերը նսեմացնելու եւ դրանք վերացնելու ուղղությամբ: Հստակ ընդգծում ենք՝նման քայլերը խիստ անընդունելի ու դատապարտելի են մեզ համար»:

Ասված է Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհրդի հայտարարության մեջ:

«Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհուրդը դատապարտում է ՀՀ գլխավոր դատախազության կողմից Վարչական դատարան ներկայացված հայցը՝ Երեւանում Արցախի Հանրապետության ներկայացուցչության շենքի նկատմամբ սեփականության իրավունքը անվավեր ճանաչելու պահանջով: ՀՀ իշխանությունները փաստացի քայլեր են ձեռնարկում՝ԱՀ ինստիտուտների դերը նսեմացնելու եւ դրանք վերացնելու ուղղությամբ: Հստակ ընդգծում ենք՝նման քայլերը խիստ անընդունելի ու դատապարտելի են մեզ համար:

Արցախի պետական ինստիտուտների գոյության եւ շարունակականության կարեւորությունը մեզ համար անսակարկելի արժեք եւ կարեւոր նպատակ է: Մենք խորապես կարեւորում ենք Արցախի մշտական ներկայացուցչության շենքի պահպանությունը Երեւանում եւ վստահեցնում ենք, որ շարունակելու ենք անել ամեն հնարավորը պետական ինստիտուտների ու Ներկայացուցչության շենքի պահպանման ուղղությամբ՝ անկախ այդ շենքից մեր գրասենյակը հանելու վերաբերյալ որոշումից:

Ինչ վերաբերում է մնացած հարցերին, ապա, ինչպես արդեն իսկ հայտարարվել է, Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհուրդը որոշում է կայացրել այս փուլում դադարեցնել փողոցային պայքարը: Խորհուրդը նախատեսում է՝

1. Վերակազմավորում, ինչը ենթադրում է թե՛ կառուցվածքային, թե՛ ռազմավարական վերանայում:

2. Համագործակցություն արցախահայության իրավունքներով զբաղվող տեղական եւ միջազգային կառույցների հետ:

3. Մարզային այցելությունների շարունակություն եւ տեղերում ԱԻՊ Խորհրդի մարզային թիմերի ձեւավորում:

Այս որոշումները պայմանավորված են մի շարք հանգամանքներով, ներառյալ՝ երկրում առկա ներքաղաքական իրավիճակով եւ ՀՀ կառավարության որդեգրած դիրքորոշումներով, որոնք իրենց ազդեցությունն են թողել նաեւ հուլիսի 12-ի հանրահավաքի եւ դրան առնչվող զարգացումների վրա:

Խորհուրդն ամիսներ շարունակ գործադրել է ջանքեր Արցախի ժողովրդի իրավունքների եւ Արցախ վերադարձի հարցերի շուրջ համահայկական օրակարգ ձեւավորելու ուղղությամբ: Ցավոք, այդ նախաձեռնությունը լայն արձագանք չստացավ: Չհաջողվեց ստանալ համապատասխան աջակցություն ո՛չ ՀՀ, ո՛չ էլ ԱՀ քաղաքական կուսակցություններից, ինչպես նաեւ մտավորական եւ հանրային ակտիվ շրջանակներից:

Այնուամենայնիվ, Խորհուրդը հավատում է, որ անգամ այս բարդ փուլում մեր միասնական ջանքերը կարող են ապահովել Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ պետական ինստիտուտների պահպանումը: Ուստի, չնայած առկա մարտահրավերներին ու դժվարություններին, մենք շարունակելու ենք մեր ջանքերն այդ ուղղությամբ՝ չբացառելով համագործակցությունը բոլոր շահագրգիռ ու առողջ ուժերի հետ»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՄՆ–Ն 10–15% ՄԱՔՍԱՏՈՒՐՔ ԿՍԱՀՄԱՆԻ

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Միացյալ Նահանգները նախատեսում է 10-15% ներմուծման մաքսատուրք սահմանել շուրջ 150 փոքր երկրներից ներմուծվող ապրանքների վրա:

Այս մասին նա հայտնել է «Իրական Ամերիկայի ձայն»-ին տված հարցազրույցում՝ նշելով, որ վերջնական որոշում դեռեւս չի կայացվել:

«Մենք պատրաստվում ենք հայտարարել նոր տոկոսադրույքներ մնացած գրեթե 150 փոքր երկրների համար: Եվ դա, հավանաբար, կկազմի 10% կամ 15%: Մենք դեռ որոշում չենք կայացրել», - ասել է Թրամփը:

Ավելի վաղ՝ ապրիլի 2-ին, Թրամփը հայտարարել էր 185 երկրներից եւ տարածքներից ներմուծվող ապրանքների վրա մաքսատուրքերի սահմանման մասին: Համընդհանուր 10% մաքսատուրքերը ուժի մեջ են մտել ապրիլի 5-ից, իսկ անհատական դրույքաչափերը՝ ապրիլի 9-ից: Նույն օրը Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարել էր պատասխան մաքսատուրքերի 90-օրյա կասեցման մասին՝ պայմանավորված առեւտրային խորհրդակցություններով:

Հուլիսի 7-ին Թրամփը հայտարարել էր, որ օգոստոսի 1-ից Ճապոնիայից եւ Հարավային Կորեայից ներմուծվող ապրանքների նկատմամբ կկիրառվի 25% մաքսատուրք, ինչպես նաեւ առանձին դրույքաչափեր մի շարք այլ երկրների համար:

Երեքշաբթի օրը նա նշել էր, որ առաջիկայում տասնյակ փոքր երկրների կուղարկվեն ծանուցագրեր՝ ավելի քան 10% մաքսատուրքի մասին: Այդ երկրները կստանան «վճարման ծանուցում»՝ ամբողջ խմբի համար միասնական մաքսատուրքի դրույքաչափով:

Թրամփի վարչակազմի կողմից Ինդոնեզիայի հետ կնքված համաձայնագիրը մինչ այժմ ստորագրված մի քանի գործարքներից մեկն է՝ օգոստոսի 1-ի վերջնաժամկետից առաջ, երբ նախատեսվում է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների մեծ մասի ներմուծումների մաքսատուրքերը կրկին կբարձրանան: Եվրոպական Միությունն ու Կանադան, իրենց հերթին, պատրաստում են հակադարձ քայլեր իրականացնել, եթե բանակցությունները Միացյալ Նահանգների-ի հետ արդյունք չտան:

Չորեքշաբթի օրը Թրամփը կրկնել է իր կանխատեսումը Հնդկաստանի հետ գործարքի վերաբերյալ, որի նկատմամբ կիրառվում է 26% մաքսատուրք, սակայն մանրամասներ չի ներկայացրել:

Հնդկաստանի առեւտրային պատվիրակությունը արդեն ժամանել է Վաշինգտոն՝ նոր բանակցությունների համար:

Եվրոպական Միության առեւտրի հարցերով հանձնակատար Մարոշ Շեֆչովիչը նույնպես մեկնել է Վաշինգտոն՝ մաքսատուրքերի վերաբերյալ բանակցությունների համար: Նա նախատեսում է հանդիպել ԱՄՆ առեւտրի նախարար Հովարդ Լյուտնիկի եւ առեւտրի ներկայացուցիչ Ջեյմիսոն Գրիրի հետ:

4 ՏԱՐԻ ՉԱՇԽԱՏԱԾ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՆՊԱՏԻԺ ՀԵՌԱՑԱՎ

ՍԻՄԻԴՅԱՆԻ ՉԱԽՈՂԱԾ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հուլիսի 16-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը շրջակա միջավայրի նախարարի պաշտոնից ազատեց Հակոբ Սիմիդյանին՝ փոխարենը նշանակելով նախկին գլխավոր խորհրդական Համբարձում Մաթեւոսյանին:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, Սիմիդյանը ազատվել է օտար լեզուների չտիրապետելու պատճառով, իսկ Հայաստանը պատրաստվում է ՄԱԿ-ի Կենսաբազմազանության կողմերի 17-րդ համաժողովին՝ COP-17-ին, որի ժամանակ բազմաթիվ հյուրեր են լինելու: Նիկոլ Փաշինյանը, շնորհակալություն հայտնելով Հակոբ Սիմիդյանին եւ նոր նախարարին հաջողություն մաղթելով՝ շեշտել է, որ այս պահին կարեւոր է COP-17-ին պատրաստվելը: Թերեւս սա էլ հաստատում է «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունները:

Հիշեցնենք, որ Հակոբ Սիմիդյանը 2021 թվականից ստանձնել էր շրջակա միջավայրի նախարարի պաշտոնը: Շուրջ չորս տարվա ընթացքում Սիմիդյանը ոչ մի մամուլի ասուլիս, հաշվետվություն չի տվել, առնչություն չի ունեցել լրագրողների հետ, հանրությանը հաշվետու չի եղել, թե ինչով է զբաղված իր ղեկավարած գերատեսչությունը:

Նշենք նաեւ այն, որ այս չորս տարիների ընթացքում շրջակա միջավայրում որեւէ առաջխաղացում չի նկատվել. Երեւանում շարունակվում է օդի աղտոտվածության միջինից բարձր ցուցանիշը, Սեւանա լիճն էլ անընդհատ մամռակալում է ու կանաչում, ձկնագողության դեպքեր են արձանագրվում, ապօրինի ծառահատումներ ու անտառահատումներ, որոնցից ամենաաղմկահարույցը Իջեւանի ծառահատման դեպքերն էին:

«Ժողովուրդ» օրաթերթը բացմիզս է գրել, որ Փաշինյանի ու Սիմիդյանի փոխհարաբերությունները շուրջ երկու տարի է լարված են, քանի որ, ըստ Փաշինյանի, Սիմիդյանը ձախողել է նախարարության բոլոր աշխատանքները, իր տեղում չէ: Մեր լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ տարբեր առիթներով Փաշինյանը նկատողություններ է տվել Սիմիդյանին, անընդհատ նշել, որ ուշքի գա, որ գործ չի անում. բայց ապարդյուն: Փաշինյանի երբեմնի սիրելի Սիմիդյանը գրեթե բոլոր հարցերում թերացումներ ուներ: Սակայն, բոլոր բացթողումներով հանդերձ, Սիմիդյանը չի դադարել մնալ Նիկոլ Փաշինյանի սիրելին. սա չի կարող պատճառ հանդիսանալ, որ նրանց հարաբերությունները խզվեն: Սիմիդյանի գործնական անցյալն էլ, հատկապես՝ 2018 թվականից հետո, թույլ է տալիս պնդելու, որ նրան նոր պաշտոնի կնշանակեն:

Հիշեցնենք, որ Հակոբ Սիմիդյանը մինչեւ քաղաքական գործունեությունը, 2009-2012 թվականներին որպես էլեկտրոնային կայքի համակարգողի օգնական աշխատել է Նիկոլ Փաշինյանի ընտանեկան «Հայկական ժամանակ» օրաթերթում:

2015 թվականիի մայիսի 30-ին ընտրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Վարչության անդամ:

2018 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի տեղակալ:

2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային ժողովի ընտրություններում պատգամավոր է ընտրվել «Իմ քայլը» դաշինքի համապետական ցուցակով:

2019 թվականի հունիսի 16-ին տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 5-րդ համագումարի ժամանակ ընտրվել է ՔՊ վարչության անդամ:

2021 թվականի օգոստոսի 2-ից մինչեւ դեկտեմբերի 10-ը եղել է ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական:

2021 թվականի դեկտեմբերի 10-ին նշանակվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարար:

Եվ արդեն 2025 թվականի հուլիսի 16-ին ազատվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի պաշտոնից:

Տեսնենք, թե հաջորդիվ ինչ պաշտոն կզբաղեցնի երբեմնի նախարարը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԽ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՑԵԼ

ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը հեռախոսազրույց է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Աքբար Ահմադիանի հետ: Այս մասին հայտնում են ԱԽՔ-ի գրասենյակից:

Արմեն Գրիգորյանը ցավակցություն է հայտնել Իսրայել-Իրան 12-օրյա պատերազմի արդյունքում զոհվածների ընտանիքի անդամներին եւ շուտափույթ ապաքինում մաղթել վիրավորներին:

Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Իրան երկկողմ համագործակցության օրակարգային հարցեր:

Արմեն Գրիգորյանն ընդգծել է ՀՀ դիրքորոշումը տարածաշրջանային կապուղիների ապաշրջափակման հարցում՝ հիմնված տարածքային ամբողջականության, ինքնիշխանության եւ իրավազորության վրա: Ահմադիանը վերահաստատել է ԻԻՀ դիրքորոշումն ապաշրջափակման հարցում եւ աջակցություն հայտնել ՀՀ դիրքորոշմանը:

Քննարկվել են նաեւ տարածաշրջանային վերջին զարգացումները, ինչի շրջանակներում Գրիգորյանն ու Ահմադիանը կարեւորել են տարածաշրջանում անվտանգության եւ կայունության պահպանման հրամայականը:

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՉՊԵՏՔ Է ՄԱՄՆԱԿՑԻ». ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Նիկոլ Փաշինյանը պետք է հրաժարական տա վարչապետի պաշտոնից կամ չմասնակցի հաջորդ ընտրություններին, «ՌԻԱ Նովոստի»-ին ասել է Ռուսաստանի հայերի միության ղեկավար Արա Աբրահամյանը: «Այս մարդը չի կարող վարչապետ լինել: Եթե նա մի փոքր մտածում է հայ ժողովրդի մասին, պետք է հենց հիմա ասի. «Գիտե՞ք ինչ, եթե այդպես է, ես հեռանում եմ»: Սա միակ բանն է, որ ճիշտ կլինի նրա համար», - կարծում է Ռուսաստանի հայերի միության ղեկավարը:

Նրա կարծիքով՝ Փաշինյանը չի կատարել ընտրողներին տված իր խոստումները:

«Արել է այնքան, որքան կարող էր, լավ, թե վատ, բայց սեղմեք «կանգ առ» կոճակը, վե՛րջ, ասեք ժողովրդին. «Ես չկարողացա անել այն, ինչ խոստացել էի ձեզ, ստացվեց ճիշտ հակառակը, դրանից ելնելով՝ ես ուզում եմ հեռանալ»: Կամ հիմա հեռանա կամ ընդհանրապես չմասնակցի ընտրություններին: Թող ուրիշները մասնակցեն», - նշել է Աբրահամյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 50 ՄԼՆ ԵՎՐՈՅԻ ՎԱՐԿ Է ՎԵՐՑՐԵԼ

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը եւ ԵՆԲ փոխնախագահ Թերեզա Չերվինսկան ստորագրել են «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ֆինանսական համաձայնագիրը: Ստորագրման արարողությանը ներկա են գտնվել ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը եւ ԵՆԲ նախագահ Նադիա Կալվինյոն:

50 մլն եվրո ծավալի վարկային համաձայնագրով նախատեսված ծրագիրն ուղղված է լինելու մարզի տնտեսական զարգացմանը եւ ենթակառուցվածքների բարելավմանը ջրամատակարարման, առողջապահության եւ կրթության ոլորտներում:

Ծրագիրը նպատակ ունի նաեւ բավարարել Սյունիքի մարզում բնակություն հաստատած տեղահանված անձանց եւ ընդունող համայնքների կարիքները:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ԴԵՊՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՔԿ–ՈՒՄ ԱՌԵՐԵՍՈՒՄ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Շուրջ երկու տարի տեւած քննությունից հետո ՀՀ քննչական կոմիտե են հրավիրվել «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանին՝ Երեւանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավարի հետ առերեսման:

Հիշեցնենք, որ 2023 թվականին Երեւանի քաղաքապետարանի աղմկահարույց միջադեպ էր եղել, որ ՀՀ ոստիկանությունից հաղորդում էր ստացվել այն մասին, որ 2023 թվականի նոյեմբերի 21-ին՝ Երեւանի ավագանու հերթական նիստի ժամանակ՝ ավագանու մի քանի անդամների միջեւ առաջացած տարաձայնության ընթացքում, փոխադարձ հարվածներ են հասցվել, որի ընթացքում, հասարակության նկատմամբ դրսեւորելով անհարգալից վերաբերմունք, հնչել են հայհոյանքներ՝ այդկերպ խախտելով քաղաքապետարանի բնականոն աշխատանքը:

Դեպքի առթիվ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (մի խումբ անձանց կողմից հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը) հատկանիշներով:

Քննչական կոմիտեն Երեւանի քաղաքապետարանի միջադեպի քրեական գործով ուսումնասիրում է լրատվամիջոցների կողմից հրապարակված տեսանյութերը, որից հետո երկու անգամ հարցաքննության էր հրավիրել Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանին եւ վերջ: Ու այժմ՝ 2 տարի անց, առերեսում են կազմակերպել. տեսնենք, թե ինչ կսպասվի առերեսումից հետո:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է 24–ԱՄՅԱ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողներն, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, Երեւանի Նարիրի Զարյան փողոցում ձերբակալել եւ բաժին են տարել Բերդ քաղաքի բնակիչ 24-ամյա մի երիտասարդի: Ըստ օպերատիվ տեղեկության՝ նա Ազատության պողոտայի ավտոտնակների մոտ փաթեթով թմրամիջոց էր տեղադրել:

Երիտասարդի խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող զանգվածով 7 փաթեթ եւ նույն զանգվածով կաթուցիչ՝ ընդհանուր մոտ 18 գրամ քաշով:

Պարզվել էր, որ երիտասարդը թմրամիջոցը իրացնելու նպատակով ձեռք էր բերել տելեգրամյան մի ալիքի օգտատիրոջից: Կազմված փաստաթղթերը եւ երիտասարդը ներկայացվել են Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ Ազատության պողոտայի շենքերից մեկի բակում գտնվող ավտոտնակի մոտ հայտնաբերվել է երիտասարդի տեղադրած փաթեթը: Նախաքննությունը շարունակվում է:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՀ-ում նախորդ 1 օրվա ընթացքում բացահայտվել է 137 հանցագործություն, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝

39 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու,

16 դեպք՝թմրանյութի հայտնաբերման,

9 դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու,

7-ական դեպք՝ ֆիզիկական ներգործության, անձնական ունեցվածքի գողության, խարդախության եւ թմրամիջոցներ պարունակող բույսեր ցանելու կամ աճեցնելու,

4 դեպք՝խուլիգանության,

3-ական դեպք՝ հոգեկան ներգործության, ինքնիրավչության, փաստաթղթեր կեղծելու եւ անհետաձգելի միջամտության որոշումը չկատարելու,

2-ական դեպք՝ բնակարանային գողության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու, հրազենի բաղկացուցիչ մասերը կեղծելու կամ ջնջելու եւ սառը զենքի հայտնաբերման:

Բացահայտվել են նաեւ կողոպուտի, շորթման, կաշառակերության, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, թմրանյութի իրացման, աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության կանոնները խախտելու, բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, փողերի լվացման, կանխամտածված սնանկության, ինքնասպանության հասցնելու, դատական ակտը չկատարելու, ծառերը, թփերը կամ բուսածածկն ապօրինի հատելու, անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքների շրջանառության դեպքեր:

ԻՐԱՎԻՃԱԿ

8 ԱՄՍԱԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ՄԱՅՐԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ 8 ամսական երեխայի մոր՝ Լիանա Հարությունյանի խափանման միջոցը փոփոխվել է:

Մեր տեղեկություններով՝ 8 ամսական երեխայի մայրիկին՝ Լիանա Հարությունյանին, եւ նրա փոքրիկին բժշկական կենտրոնում մոտեցել եւ ասել են՝ «գնացեք տուն»:

ArmLur.am-ին դատարանից փոխանցեցին, որ Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում երեկ՝ կրկին հերթական նիստի ընթացքում, որոշում է կայացվել փոխել 8 ամսական երեխայի մոր՝ Լիանա Հարությունյանի կալանքը:

Արդյունքում, դատավոր Արշակ Մաթեւոսյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լիանա Հարությունյանը պատշաճ վարք է դրսեւորել դատարանում եւ իր խնամքին ունի 3 անչափահաս երեխա, որոշել է փոխել խափանման միջոցը եւ նոր խափանման միջոց ընտրել վարչական հսկողությունը եւ չբացակայելու արգելքը:

Դատարանը անգամ քննության առարկա չի դարձրել ԱԺ պատգամավորների երաշխավորագրերը Լիանա Հարությունյանի վերաբերյալ:

Հիշեցնենք, որ հուլիսի 11-ին մեծ աղմուկ բարձրացավ, որ դատավոր Արշակ Մաթեւոսյանը 3 ամսով կալանքի է տարել 8 ամսական երեխայի մորը՝ Լիանա Հարությունյանին:

Հավելենք, որ մանրամասներ էինք հայտնել Շենգավիթի դատարանում 8 ամսական երեխայի մոր կալանքից: ArmLur.am-ին փոխանցել էին, որ կնոջը կալանավորել են ներքոնշյալ քրեական-գործով:

Մասնավորապես, ըստ նախաքննական մարմնի, Լիանա Ժուլիվերի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանցագործությանը նպաստելով՝ տեղեկություններ տրամադրելու եւ խոչընդոտները վերացնելու եղանակներով, օժանդակել է ՀՀ «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի ռեկտոր Վաղարշակ Մադոյանին եւ պրոռեկտոր Դավիթ Մադոյանին, իրենց իշխանական կամ ծառայողական լիազորությունների օգտագործմամբ Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի Գուրվինդեր Կումարի, քրեական վարույթով դեռեւս չպարզված ոմն «Ջոն»-ի եւ «Աշոք»-ի հետ, շահադիտական դրդումներից ելնելով, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, միմյանց գործողությունները փոխլրացնելով՝ Հնդկաստանի 16 քաղաքացիների անօրինական միգրացիան է կազմակերպել:

Մինչ կալանքը նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը, սակայն դատական նիստերից մեկին մեղադրյալ Լիանա Հարությունյանը չի ներկայացել ու դատարանը որոշել է նախագահող դատավոր Արշակ Մաթեւոսյանի որոշմամբ նրան 3 ամսով կալանավորել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՅԹՈՒՑԻՉՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Հուլիսի 14-ին Համայնքային ոստիկանության Ճամբարակի բաժին զանգահարած քաղաքացին հայտնել է, որ Ճամբարակ-Դրախտիկ ճանապարհին զենք-զինամթերք է թողել, որը ձեռք է բերել 2020 թվականի պատերազմի ժամանակ:

Մեկնած օպերատիվ-քննչական խումբը նշված տարածքում հայտնաբերել է պոլիէթիլենային պարկ, որի մեջ կար ինքնաշեն թմբուկավոր ատրճանակ, տարբեր տրամաչափերի եւ հրազենների 192 փամփուշտ, նռնակ, նռնակի 2 պայթուցիչ, ինքնաձիգի 2 պահեստատուփ:

Հիշեցնենք. ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնողներն ազատվում են քրեական պատասխանատվությունից:

● Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 16-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 137 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱՐԻՔԱՎՈՐ 139 ԲՆԱԿՉԻ ԴԻՄՈՒՄ ՄԵՐԺՎԵԼ Է

Տեղեկատվական հարցում կատարելով՝ Տավուշի մարզպետի աշխատակազմից տեղեկացել ենք, որ 2025 թվականի հուլիսի 7-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 29 միլիոն 90 հազար 700 դրամ պարգեւավճար:

2025 թվականի հուլիսի 7-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմում ստացվել է քաղաքացիներից ֆինանսական աջակցության 798 դիմում. դրական լուծում է տրվել 659-ին, ընդհանուր հատկացվել է 32 միլիոն 510 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Մարզպետարանում մերժել են ֆինանսական օգնություն հատկացնել կարիքավոր 139 բնակիչների:

ՆԱՎՈՒՐԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ ԴԵՌ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՌԱՋ ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵՐ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել, թե «300 դպրոց, 500 մանկապարտեզ» պետական ծրագրով Տավուշի մարզում ի՞նչ դպրոցների, մանկապարտեզների շենքեր են կառուցվում, կամ նախատեսվում կառուցվել: Մի քանի օր անց մարզպետարանից պատասխան ենք ստացել, որտեղ Բերդ համայնքի Նավուր գյուղի դպրոցի մասին գրված է. «Նավուրի մոդուլային միջնակարգ դպրոցի կառուցում-հասարակական լսումներ»:

Այսինքն՝ Նավուրի դպրոցի կառուցման հասարակական լսումների փուլն է: Մինչդեռ նախատեսված էր Նավուրի դպրոցի նոր շենքը դեռ 2 տարի առաջ շահագործման հանձնել: Նավուր բնակավայրի վարչական ղեկավար Մհեր Նիգոյանը հայտնեց, որ այս տարվա գարնան սկզբում կայացել է շրջակա միջավայրի ազդեցության վերաբերյալ Նավուրի դպրոցի կառուցման հանրային լսումների առաջին փուլը մեկ ամիս առաջ՝ 2-րդ փուլը: Նավուրի դպրոցի տանիքը երկու անգամ վերանորոգել են, փոխել են դպրոցի պատուհանները, սակայն դպրոցի միջնապատերը խարխուլ են, արտաքին պատից քարեր են թափվել: Նախատեսում են քանդել դպրոցի եռահարկ շենքը, տեղում կառուցել մոդուլային դպրոցի շենք:

Նավուրի բնակիչների մի մասը դեմ է դպրոցի շենքի քանդմանը. շենքը վթարային չէ:

Նավուր գյուղում վարձով բնակվում են Արցախից բռնագաղթած 4 ընտանիք, դպրոցի շենքը նորոգելուց հետո այն կարող էր արցախցի ընտանիքների համար բնակարան դառնալ: Արցախից բռնագաղթած ընտանիքներից ոչ մեկը մինչեւ այժմ Բերդ համայնքի բնակավայրերում պետական աջակցությամբ բնակարան ձեռք չի բերել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՈՒԼԻՍԻ 17-Ը ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՊՈՏՍԴԱՄԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՍԿԻԶԲԸ

1945 թվականի հուլիսի 17-ին Պոտսդամ քաղաքում (Բեռլին) մեկնարկեց Պոտսդամի (կամ Բեռլինի) կոնֆերանսը, որին մասնակցում էին հակահիտլերյան կոալիցիայի դաշնակից երկրների կառավարությունների ղեկավարները: Կոնֆերանսը տեւեց մինչեւ օգոստոսի 2-ը եւ ամրագրեց դաշնակիցների հաղթանակը ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ՝ քննարկելով նաեւ Եվրոպայի հետպատերազմյան կարգավորման հիմնախնդիրները:

Խորհրդային պատվիրակությունը գլխավորում էր Իոսիֆ Ստալինը, ամերիկյան պատվիրակությունը՝ նախագահ Հարրի Թրումենը (Ֆրանկլին Ռուզվելտի մահից հետո), իսկ բրիտանական պատվիրակությունը՝ վարչապետ Ուինսթոն Չերչիլը, ում հուլիսի 28-ից փոխարինեց լեյբորիստ Կլեմենտ Էտլին: Կոնֆերանսին մասնակցում էին նաեւ մեծ տերությունների արտաքին գործերի նախարարները եւ ռազմական ներկայացուցիչները:

Պոտսդամի կոնֆերանսի անցկացման վայրը ընտրվել էր առանց լուրջ վեճերի: Քանի որ Բեռլինը մեծապես ավերված էր, ընտրվեց մոտակա Պոտսդամ քաղաքը, որտեղ լավ պահպանված էր Ցեցիլիենհոֆ պալատը: Պոտսդամի ընտրությունը նաեւ խորհրդանշական էր, քանի որ հենց այստեղ 1933 թվականին Գինդենբուրգը հաստատել էր Հիտլերի նշանակումը Գերմանիայի կանցլեր:

Կոնֆերանսի հիմնական հարցերը վերաբերում էին Եվրոպայի կարգավորմանը, հատկապես՝ գերմանական հարցին: Հիմք ընդունելով 1945 թվականի Յալթայի կոնֆերանսի որոշումները՝ կողմերը մշակեցին համաձայնագիր՝ Գերմանիայի նկատմամբ վերահսկողության սկզբնական շրջանում կիրառվելիք քաղաքական եւ տնտեսական սկզբունքների մասին: Որոշվեց, որ Գերմանիայի նկատմամբ գերագույն իշխանությունը կիրականացնեն օկուպացիոն զորքերի գլխավոր հրամանատարները՝ յուրաքանչյուրը իր գոտում, իսկ ընդհանուր հարցերը կլուծվեն համատեղ՝ Կոնտրոլային խորհրդի միջոցով: Գերմանիայի օկուպացիայի նպատակներն էին՝ ապառազմականացումը, դենացիֆիկացումը, դեմոկրատացումը եւ դեկարտելացումը:

Կոնֆերանսը որոշեց Գերմանիայի ամբողջական զինաթափում, զինված ուժերի եւ նրանց բոլոր կառույցների լուծարում, ռազմական արդյունաբերության վերացում կամ վերահսկողություն, ինչպես նաեւ զենքի եւ զինամթերքի ոչնչացում կամ հանձնում դաշնակիցներին: Որոշվեց լուծարել նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը, չեղարկել նացիստական օրենքները, դատի տալ ռազմական հանցագործներին եւ ակտիվ նացիստներին հեռացնել պետական եւ մասնավոր պատասխանատու պաշտոններից: Գլխավոր ռազմական հանցագործների դատավարության համար ստեղծվեց Միջազգային ռազմական տribունալ: Գերմանիայի դեմոկրատական զարգացման համար նախատեսվում էր կրթության, արդարադատության եւ տեղական ինքնակառավարման համակարգերի վերակազմավորում, ինչպես նաեւ ժողովրդավարական կուսակցությունների գործունեության թույլատրում եւ աջակցություն:

Պոտսդամում գտնվելու ընթացքում Թրումենը տեղեկացավ ԱՄՆ-ում ատոմային ռումբի հաջող փորձարկման մասին եւ այդ մասին տեղեկացրեց Չերչիլին, ապա՝ Ստալինին: Չերչիլի համար սա ուրախալի լուր էր, քանի որ նոր զենքը փոխում էր ուժերի հավասարակշռությունը Արեւմուտքի օգտին, իսկ Ստալինը հանգիստ արձագանքեց, ինչը զարմացրեց արեւմտյան առաջնորդներին: Սակայն, ըստ հետագայում բացահայտված խորհրդային արխիվների, ԽՍՀՄ ղեկավարությունը տեղյակ էր ամերիկյան ատոմային ծրագրի մասին:

Պատմաբանների կարծիքով՝ Պոտսդամի կոնֆերանսը եզրափակեց Երկրորդ համաշխարհային պատերազմի վեց տարիները եւ սահմանեց պատմական սահմանագիծ պատերազմի եւ խաղաղության միջեւ: Միաժամանակ այն արտացոլեց աշխարհում ստեղծված նոր իրավիճակը՝ հակահիտլերյան կոալիցիայի հաղթանակից հետո: Ընդհանուր առմամբ, Պոտսդամի կոնֆերանսի մասնակիցներին հաջողվեց ժամանակավորապես մեղմել առաջացած տարաձայնությունները եւ կանխել բացահայտ ճեղքումը դաշնակիցների միջեւ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2025թ.-ի հուլիսի 29-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք.Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 33 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 29.7 գր. ընդհանուր քաշով, որից 9 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 8.8 գր.) 500 հարգի՝ 176.200 ՀՀ դրամ, 11.1 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 432.500 ՀՀ դրամ, 2.9 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 2.8 գր.) 750 հարգի՝ 85.300 ՀՀ դրամ, 6.7 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 6.6 գր.) 585 հարգի՝ 156.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝850.800 ՀՀ դրամ: Թիվ 34 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 36 գր. ընդհանուր քաշով, որից 19.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 15.6 գր.) 585 հարգի՝ 370.700 ՀՀ դրամ, 12.3գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ (զուտ քաշը 11.8 գր.) 500 հարգի՝236.300 ՀՀ դրամ, 4.2 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ (զուտ քաշը 3.8 գր.) 585 հարգի՝90.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 697.300 ՀՀ դրամ: Թիվ 35 լոտ՝ ոսկյա զարդ 10.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 10.8 գր) 750 հարգի, լոտի մեկնարկային գինը՝329.000 ՀՀ դրամ: Թիվ 36 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 9.5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9.4 գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝188.200 ՀՀ դրամ: Թիվ 37 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 8.3 գր. ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 197.200 ՀՀ դրամ: Թիվ 38 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 5.8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 5.4գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 128.300 ՀՀ դրամ: Թիվ 39 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 4 գր. ընդհանուր քաշով, որից 2.2 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 2 գր.) 500 հարգի՝ 40.050 ՀՀ դրամ, 1.8 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 1.8գր.) 585 հարգի՝42.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 82.750 ՀՀ դրամ: Թիվ 40 լոտ՝ոսկյա զարդեր 12 գր. ընդհանուր քաշով 750 հարգի, լոտի մեկնարկային գինը՝365.600 ՀՀ դրամ: Թիվ 41 լոտ՝ոսկյա զարդ 8.3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 190.100 ՀՀ դրամ: Թիվ 42 լոտ՝ոսկյա զարդ 5.8 գր. ընդհանուր քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 137.800 ՀՀ դրամ: Թիվ 43 լոտ՝ոսկյա ջարդոն 7.5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7.2 գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 144.200 ՀՀ դրամ: Թիվ 44 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 4.8 գր. ընդհանուր քաշով, 958 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 187.000ՀՀ դրամ: Թիվ 45 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 13.6 գր. ընդհանուր քաշով, որից 5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 4.5գր.) 500 հարգի՝90.100 ՀՀ դրամ, 8.6 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 4.8գր.) 585 հարգի՝114.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝204.100 ՀՀ դրամ: Թիվ 46 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 4.5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 4.3 գր.) 550 հարգի, լոտի մեկնարկային գինը՝96.000 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժ. 9:00-13:00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ +374 43 00 42 27:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար, 19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Harmony Meetup VII-Ը ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է Web3 ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՆ

Fastex

Հուլիսի 9-ին Երեւանը հյուրընկալել էր Harmony Meetup VII ամենամյա միջոցառումը, որը մեկ հարկի տակ է համախմբում Web3 ոլորտի առաջատարներին: Միջոցառմանը Fastex-ը ոլորտի փորձառու մասնագետների հետ բացահայտել է առկա մարտահրավերները եւ փոխանակվել նորարարական գաղափարներով եւ Web3-ի հեռանկարներով:

Harmony Meetup VII-ի ընթացքում ամփոփվել են Fastex-ի նախորդ վեց ամիսների ձեռքբերումները՝ նոր պրոդուկտների թողարկում, էկոհամակարգի աճ եւ շուկայի ընդլայնում: Fastex-ի հաջորդ կարեւոր ձեռքբերումը FTN հուշադրամի (FTN Note) թողարկումն է, ինչպես նաեւ Fastex դեբետային քարտի թարմացումը եւ նոր պրեմիում տեսակի Fastex մետաղական քարտը:

Harmony VII-ին բոլոր այցելուները հնարավորություն են ունեցել ծանոթանալ էկոհամակարգի զարգացման ծրագրին, շփվել թիմի անդամների հետ: Միջոցառումը լուսաբանվել է միջազգային առաջատար մեդիա ընկերությունների կողմից: Harmony VII-ին այս տարի ներկա են գտնվել News.Bitcoin.com մեդիայի լրագրող Դեյվիդ Սենսիլը եւ Cointelegraph-ի լրագրող Ջովանի Պինին:

News.Bitcoin.com-ի հետ զրույցում Fastex-ի իրավաբանական գծով տնօրեն եւ տնօրենների խորհրդի անդամ Վարդան Խաչատրյանը խոսել է բրազիլական շուկա մուտք գործելու Fastex-ի ծրագրերի մասին: Նրա խոսքով՝ ոլորտում առկա մրցակցության համատեքստում Բրազիլիան՝ որպես տարածաշրջան, հնարավորություն կտա ներգրավելու նոր օգտատերերի:

Fireblocks-ի վաճառքի գծով ղեկավար Մայքլ Փարսնզը Bitcoin News-ին տված հարցազրույցում անդրադարձել է Fastex-ի հետ համագործակցությանը՝ ընդգծելով Fireblocks-ի ենթակառուցվածքների կիրառությամբ Fastex էկոհամակարգում անվտանգ եւ ապահով միջավայր ստեղծելու կարեւորությունը:

Harmony Meetup VII-ը եւս մեկ անգամ նշանավորվել է ամուր համագործակցությունների եւ գործընկերային կապերի ձեռքբերմամբ՝ ձեւավորելով Web3 համայնք եւ սահմանելով խաղի նոր կանոններ:

Fastex-ի մասին

Հիշեցնենք, որ Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտոփոխանակման հարթակը, Fastex Card-ը, YoWallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով:

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ԿԱՅԱՑԵԼ Է Ortak x B.F.T.H. Arena ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

Մ.թ. հուլիսի 10-ին Երեւանի «Փարավոն» համալիրում կայացել է հերթական Ortak x B.F.T.H. Arena մրցանակաբաշխությունը: 20 միջազգային հովանավորներով խաղային տեխնոլոգիաների ոլորտի՝ տարածաշրջանում ամենախոշոր մրցանակաբաշխությունն այս տարի միավորել է 600-ից ավելի միջազգային հյուրերի, որոնց թվում աննախադեպ տոկոս են կազմել աշխարհի խոշոր SS ընկերությունների հենց ղեկավար կազմի ներկայացուցիչները:

Այս տարի մրցանակաբաշխությունը ներառել է անվանակարգեր երեք կատեգորիաներում.

Ortak, որում մրցել են տասնյակ ընկերությունների կողմից ներկայացված լավագույն NFT հավաքածուները,

FTN՝ տարբերվող դիզայնը եւ տեխնոլոգիական նորարարությունը գնահատող կատեգորիա, եւ բոլորովին նոր՝ YoDoor կատեգորիան, որում ներառված անվանակարգերի պահանջները վերաբերում են տարածքների եռաչափ դիզայնին ու օգտատերերի սահուն տեխնոլոգիական փորձառությանը: Մրցանակները տրամադրվել են FTN-ային որոշակի արժեք ունեցող NFT-ներով:

4 ժամ տեւած Ortak x B.F.T.H. Arena շքեղագույն մրցանակաբաշխությանը ներկա են եղել օտարերկրյա հայտնի դիզեյներ, արտիստներ Հայաստանից ու արտերկրից, շոու-ծրագիրը հագեցած է եղել տեխնիկական ու լուսային դիտարժան լուծումներով:

Նշենք, որ Ortak կատեգորիայում «Լավագույն Ortak Estate հավաքածու» (Best Ortak Estate Collection) է ճանաչվել «RAK» ընկերությունը, «Լավագույն Ortak կատարող» (Best Ortak Performer) է ճանաչվել Ռուբեն Հախվերդյանը, «Լավագույն սկսնակ NFT հավաքածու» (Best Start-up NFT Collection) անվանակարգում էլ՝ «Consulabs» ընկերությունը, «Տարվա լավագույն նորարարական բիզնես» (Most Innovative Business of the Year) է ճանաչվել «Orbitial Gaming» ընկերությունը:

FTN կատեգորիայի անվանակարգերի հաղթողներից են.

«Տարվա FTN նորարարություն» (FTN Innovation of the Year)՝ «Ֆասթ Շիֆթ» վճարահաշվարկային ընկերությունը, «Լավագույն FTN խաղի դիզայն» (Best FTN Game Design)՝ «PHOENIX 7» ընկերությունը, «FTN խաղի լավագույն երաժշտությունը» (Best FTN Game Soundtrack) ներկայացրել է «Endorphina»-ն:

YoDoor կատեգորիայի անվանակարգերից «Լավագույն YoDoor անշարժ գույքի ընկերություն» (Best YoDoor Estate Company) է ճանաչվել «InterContinental Ras Al Khaimah»-ն, իսկ «Լավագույն YoDoor տարածություն» (Best YoDoor Space) անվանակարգում՝ «Blockchain Embassy»-ն:

Հավելենք, որ հաջորդ մրցանակաբաշխությունը կկայանա այս տարի՝ դեկտեմբերին Արաբական Միացյալ Էմիրությունների Ռաս Ալ Խայմա քաղաքում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում, որպես մեկ միասնական համալիր՝650000000 ՀՀ դրամ մեկնարկային գնով, վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝- ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, 4/1 շենք, 12 հասցեում գտնվող 204,9 քմ պահեստ եւ 0,02615 հա հողամաս (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն, բաժնեմասը՝ 205/1676): Լոտի մեկնարկային գինը՝92040000 ՀՀ դրամ:

- ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, 4/1 շենք, 13 հասցեում գտնվող 216 քմ առեւտրի սրահ, 32,9 քմ ինքնակամ կառույց, 32,9 քմ ինքնակամ հողամաս եւ 0,02615 հա հողամաս (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն, բաժնեմասը՝ 216/1676): Լոտի մեկնարկային գինը՝ 148210000 ՀՀ դրամ:

- ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, 4/1 շենք, 15 հասցեում գտնվող 103,6 քմ բնակարան եւ 41,6 քմ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող բնակարան, բաժնեմասը՝ 1/4: Լոտի մեկնարկային գինը՝49324000 ՀՀ դրամ:

- ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, 6 շենք, 62 հասցեում գտնվող 103,4 քմ տարածք: Լոտի մեկնարկային գինը՝56522000 ՀՀ դրամ:

- ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, 6 շենք, 63 հասցեում գտնվող 99.6 քմ տարածք: Լոտի մեկնարկային գինը՝55342000 ՀՀ դրամ:

- ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, 6 շենք, 63/1 հասցեում գտնվող 36.9 քմ տարածք: Լոտի մեկնարկային գինը՝24544000 ՀՀ դրամ:

- ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, 6 շենք, 64 հասցեում գտնվող 73.7 քմ տարածք: Լոտի մեկնարկային գինը՝38586000 ՀՀ դրամ:

- ՀՀ, ք. Երեւան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, 6 շենք, 67 հասցեում գտնվող 355.1 քմ հասարակական տարածք եւ 43,3 քմ ինքնակամ կառուցված շինություններ: Լոտի մեկնարկային գինը՝ 185432000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 04.08.2025թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԱՆՀԱՅՏ ՆՊԱՏԱԿԱԿԵՏ»

ՔԻԱՌՈՍՏԱՄԻԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Ոսկե ծիրան» 22-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակում Հայաստանի ազգային դատկերասրահում մեկնարկել է իրանական կինոյի նշանավոր ներկայացուցիչ Աբբաս Քիառոստամիի լուսանկարների ցուցահանդեսը՝ «Անհայտ նպատակակետ» խորագրով: Ցուցադրության ընթացքում ներկայացված են 28 սեւ-սպիտակ լուսանկարներ, որոնք արվեստագետը ստեղծել է տարիների ընթացքում ֆիլմերի նկարահանման վայրեր որոնելիս: Լուսանկարները չունեն վերնագրեր կամ տարեթվեր. դրանցում դատկերված են հիմնականում ճանապարհներ, որոնք վերածվում են այլաբանական խորհրդանիշների՝ բնության տարրերի եւ մարդկային ներկայության հետքերի համադրությամբ:

Ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, «Ոսկե ծիրան» կինոփառատոնի համահիմնադիր եւ նախագահ Հարություն Խաչատրյանը, փառատոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կարեն Ավետիսյանը, ինչպես նաեւ միջազգային փառատոնի բացման ֆիլմի ռեժիսոր Ջաֆար Փանահին, տարածաշրջանային մրցույթի ժյուրիի նախագահ Ամիր Նադերին, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը եւ ցուցահանդեսի համադրող Վիգեն Գալստյանը:

Իր ողջույնի խոսքում նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը նշել է, որ «Ոսկե ծիրան» փառատոնը տարեցտարի վերափոխվում է՝ հարմարվելով ժամանակակից մշակութային օրակարգին: Նա ընդգծել է, որ նման ցուցադրություններն ու նախաձեռնությունները կարեւոր դեր ունեն ոչ միայն հայ հանդիսատեսին բարձրարժեք մշակույթ ներկայացնելու, այլ նաեւ միջազգային հարթակում հայկական կինոյի դիրքավորումը խթանելու գործում: Ըստ նրա՝ փառատոնին մասնակցող հայտնի ռեժիսորների՝ Ջաֆար Փանահիների եւ Ամիր Նադերիի ներկայությունը վկայում է փառատոնի որակի ու միջազգային ճանաչման մասին:

«Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի շրջանակում կինոցուցադրություններին զուգահեռ անցկացվում են վարպետության դասեր, պանելային քննարկումներ, հանդիպումներ եւ մշակութային այլ միջոցառումներ: «Անհայտ նպատակակետ» ցուցադրության շրջանակում Ջաֆար Փանահին եւ Ամիր Նադերին կիսվել են հիշողություններով՝ պատմելով իրենց համագործակցության մասին Աբբաս Քիառոստամիի հետ եւ վերհիշելով տարբեր տարիների համատեղ աշխատանքները:

Քիառոստամին, ինչպես իր կինոարտադրանքում, այնպես էլ լուսանկարչական գործերում, կենտրոնանում է ճանապարհորդության խորհրդանշական իմաստի վրա՝ այն դիտարկելով որպես կյանքի անցողիկության եւ բնության հավերժության հակադրության արտահայտություն:

Ցուցահանդեսը կազմակերպվել է «Ոսկե ծիրան» կինոփառատոնի աջակցությամբ: Ներկայացված լուսանկարների շարքը Աբբաս Քիառոստամին անձամբ է նվիրաբերել փառատոնին դեռեւս 2004 թվականին, երբ Երեւանում անցկացվում էր նրա ֆիլմերի առաջին հետահայաց ցուցադրությունը:

Ցուցադրությունը Հայաստանի ազգային պատկերասրահում բաց կլինի մինչեւ սեպտեմբերի 15-ը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՋԱԳՈՒՅՆ ՎԻՃԱԿՆԵՐ՝ ՊԱՐԶ ԿԻՆՈԼԵԶՎՈՎ

ՋԱՖԱՐ ՓԱՆԱՀԻԻ ՖԻԼՄԸ ԼԵՖ-ԼԵՅՈՒՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ ՑՈՒՑԱԴՐՎԵՑ

Իրանական կինոյի ամենահետաքրքիր ու ինքնատիպ ռեժիսորներից մեկը՝ Ջաֆար Փանահին, անակնկալ մատուցեց իր ֆիլմերի երկրպագուներին՝ այս տարի եւս գալով Հայաստան՝ մասնակցելու «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին:

Փառատոնը մեկնարկեց նրա «Մի պարզ պատահար» ֆիլմի ցուցադրությամբ, որն ամիսներ առաջ Կաննի կինոփառատոնում «Ոսկե արմավենու ճյուղ» մրցանակին էր արժանացել: Պարզվեց՝ անգամ «Մոսկվա» կինոթատրոնի կարմիր դահլիճը բավականին մեծ չէ Փանահիի կինոարվեստը գնահատողներին հյուրընկալելու համար: Շատերը ֆիլմը դիտեցին հատակին նստած: Այդ փաստը փառատոնի կազմակերպիչներին բերեց այն եզրակացության, որ պետք է բանակցել կինոնկարի երրորդ ցուցադրություն կազմակերպելու վերաբերյալ:

Ցուցադրությունից առաջ Ջաֆար Փանահին բարձրացավ բեմ եւ հիշեցրեց, որ 21-րդ «Ոսկե ծիրան»-ի ժամանակ Երեւանում էր, սակայն այլ հոգեվիճակում եւ պայմաններում:

«Նկարահանումների ավարտն էր մոտենում, երբ պատկան մարմինները ներխուժեցին նկարահանման տաղավար եւ արգելեցին շարունակել մեր աշխատանքը: Փառատոնին մասնակցելու հրավեր ստացել էի մինչ ֆիլմի ավարտը, բայց կարծում էի՝ նկարահանման պատճառով չեմ կարողանա գալ: Կարծում եմ՝ փառատոնի կազմակերպիչներն ինչ-որ համաձայնության էին եկել նկարահանումն արգելող մարդկանց հետ, ինչի արդյունքում ես եկա»,- կատակեց ռեժիսորը:

«Մի պարզ պատահար» կինոնկարն անդրադառնում է անհատների, որոնք անարդարության զոհ են դարձել: Նրանք փորձում են ապրել, առաջ շարժվել, նոր կյանք սկսել, սակայն անցյալը ներխուժում է նրանց կյանք ու փոխում բոլոր ծրագրերը: Փանահին կարողացել է լրջագույն իրավիճակներն ու խնդիրները ներկայացնել այնքան հետաքրքիր ու առաջին հայացքից պարզ կինոլեզվով, որ ֆիլմը դիտելիս հաճախ ժպտում ես, երբեմն էլ՝ ծիծաղում:

Փանահին ֆիլմի ցուցադրությունը նվիրեց դերակատարներին եւ իրական հերոսներին, որոնք երկար տարիներ բանտարկված են: «Սա մի փոքրիկ պատմություն է Իրանի բանտարկյալների մասին»,-ընդգծեց ռեժիսորն ու հավելեց՝ ֆիլմը նաեւ նվիրում է Իրանի քաջ կանանց, որոնք պայքարում են կանանց ազատության եւ կյանքի համար:

Նախորդ տարի «Ոսկե ծիրան»-ի շրջանակում Ջաֆար Փանահիին շնորհվեց «Փարաջանովյան թալեր» մրցանակը՝ համաշխարհային կինոյում ունեցած վաստակի համար: Փանահիին երկիրը լքելու 15 տարվա արգելքից հետո էին թույլ տվել դուրս գալ Իրանից: Նրա ներկայությունը փառատոնին դարձավ ոչ միայն մշակութային իրադարձություն, այլեւ քաղաքական եւ մարդասիրական հաղթանակ:

Հայտնի ռուս կինոգետ Անտոն Դոլինը, որն անցյալ տարի փառատոնի ժամանակ Երեւանում ներկայացրեց Փանահիի մասին իր հեղինակած գիրքը, Կաննի 2025 թվականի իր ռեպորտաժում հատուկ ընդգծում է, որ Փանահիին հանդիպել է 2024-ի ամռանը «Ոսկե ծիրան»-ի օրերին: Նա հրապարակում է լուսանկար եւ հիշում, որ «Ոսկե ծիրան»-ն է առաջին փառատոնը, որը հրավիրել է Փանահիին: Այսպիսով՝ Փանահիի վերադարձը մեծ փառատոների բեմեր սկսվել է Երեւանից:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ՀՐԱԺԵՇՏ ԿՏԱ 3 ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ

Կատալոնական «Բարսելոնան» մտադիր է բաժանվել երեք ֆուտբոլիստներից մինչեւ ասիական տուրնեի մեկնարկը: Այս մասին հայտնում է Diario Sport-ը:

Աղբյուրի տեղեկություններով՝ «կապտանռնագույնները» այլեւս հետաքրքրված չեն դարպասապահ Ինյակի Պենյայի, հարձակվող Պաու Վիկտորի եւ կիսապաշտպան Օրիոլ Ռոմեուի ծառայություններով:

Հիշեցնենք, որ նախորդ մրցաշրջանում Հանս-Դիտեր Ֆլիկի գլխավորությամբ «Բարսելոնան» դարձավ Իսպանիայի առաջնության չեմպիոն եւ նվաճեց Իսպանիայի գավաթը: Լա Լիգայի նոր մրցաշրջանը կմեկնարկի օգոստոսի կեսերին: Առաջին տուրում «Բարսելոնան» հյուրընկալվելով կմրցի «Մալյորկայի» հետ:

ՍԿԱՆԴԱԼ՝ «ԱԼԱՇԿԵՐՏԻ» ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԽԱՂԻ ՇՈՒՐՋ

ՈՒԵՖԱ-ն 10 տարով եվրոպական մրցաշարերից հեռացրել է Չեռնոգորիայի «Արսենալ Տիվատ» ակումբին պայմանավորված խաղերի կապակցությամբ: Այս մասին հայտնում է Associated Press-ը:

Ըստ աղբյուրի՝ խախտումները տեղի են ունեցել 2023/24 մրցաշրջանի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման փուլում, որտեղ «Արսենալը» մրցել էր «Ալաշկերտի» հետ: Հայաստանում կայացած առաջին խաղն ավարտվել է 1:1 հաշվով ոչ-ոքի, իսկ Չեռնոգորիայում կայացած պատասխան հանդիպման ժամանակ «Արսենալը» պարտվել է 1:6 հաշվով՝ ավելացված ժամանակում բաց թողնելով երկու գոլ:

ՈՒԵՖԱ-ն չի ներկայացրել խաղերի արժանահավատության խախտման մանրամասները կամ հնարավոր խաղադրույքային գործարքների մասին տեղեկություններ:

Արդյունքում՝ «Արսենալ Տիվատը» մինչեւ 2034/35 մրցաշրջանի ավարտը հեռացվել է ՈՒԵՖԱ-ի հովանու ներքո անցկացվող մրցաշարերից եւ տուգանվել 500,000 եվրոյով:

Բացի այդ, ակումբի սպորտային տնօրեն Ռանկո Կրգովիչը եւ ֆուտբոլիստ Նիկոլա Չելեբիչը մշտապես հեռացվել են ֆուտբոլից, իսկ մի շարք այլ խաղացողներ ստացել են 10-ամյա որակազրկում:

ՈՒԵՖԱ-ն պատժամիջոցներ է կիրառել Սերբիայի «Ռադնիչկի Օբրենովաց» ակումբի երկու պաշտոնյաների նկատմամբ. Միլան Վիգնյեւիչը որակազրկվել է 10 տարով, իսկ Գորան Յանյուշեւիչը՝ 6 տարով: Եվս մեկ անձ՝ Քրիստոս Փսոմիադիսը, ստացել է 8-ամյա որակազրկում:

ՈՒԵՖԱ-ն հայտարարել է, որ կդիմի ՖԻՖԱ-ին՝ այս որակազրկումները համաշխարհային մակարդակով կիրառելու համար:

● Հուլիսի 21-ին՝ 19:00-ին, օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Ադամն ու Եվան» յուրօրինակ ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 8000-25000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանք ինչպես կարելի է ձեռք բերել:

Մարգարիտ Կիրակոսյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

Տեղեկանքը ստորագրվում է ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի կողմից եւ կնքվում գործակալության եռալեզու կնիքով: ՀՀ արդարադատության նախարարության կողմից տեղեկանքը տրամադրվում է՝

հայերեն (ձեւ N 1 բնօրինակ կնիքով եւ ստորագրությամբ), (ձեւ N 1 էլեկտրոնային կնիքով եւ ստորագրությամբ),

այերեն-անգլերեն (ձեւ N 2 բնօրինակ կնիքով եւ ստորագրությամբ), (ձեւ N 2 էլեկտրոնային կնիքով եւ ստորագրությամբ),

հայերեն-ռուսերեն (ձեւ N 2 բնօրինակ կնիքով եւ ստորագրությամբ), (ձեւ N 2 էլեկտրոնային կնիքով եւ ստորագրությամբ):

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանքները (ձեւ N 1, ձեւ N 2) պատրաստվում են էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով եւ տրամադրվում են փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով՝ ըստ դիմողի ցանկության:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մեկ դիմումի շրջանակներում տրամադրվում է մեկ տեղեկանք: Տրամադրվող տեղեկանքի տարբերակը ընտրվում է դիմումատուի կողմից: Նույն համարի ներքո տրամադրվում է մեկ տեղեկանք: Տեղեկանքի կրկնօրինակ չի տրամադրվում: Տեղեկանքը կորցնելու դեպքում անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել նոր դիմում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ է հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագիրը:

Նարեկ Ամիրխանյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ՎԱԾ-ը սահմանված որոշակի վավերապայմաններով եւ ձեւով, լրացման համար անհրաժեշտ դաշտեր պարունակող փաստաթուղթ է, որի համաձայն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձի բժշկական, մասնագիտական եւ սոցիալական վերականգնումը: Վերականգնողական անհատական ծրագիրը (ՎԱԾ) կազմվում է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի կողմից հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու դեպքում: Վերականգնողական անհատական ծրագրում սահմանվում են վերականգնողական միջոցառումների ծավալները, տեսակները եւ ժամկետները, աջակցող միջոցների եւ այլ ծառայությունների տեսակները:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՎԱԾ-ն ունի երաշխավորական բնույթ: Հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի հրաժարվելու վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված վերականգնողական միջոցառման տեսակից, ձեւից եւ ծավալից, ինչպես նաեւ ամբողջ ծրագրի իրականացումից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ինչպես արդեն շատերը նկատել են, Երեւանի Շառլ Ազնավուրի հրապարակում տեղադրվել է լեգենդար երգիչ Շառլ Ազնավուրի հուշարձանը:

Հուշարձանի պաշտոնական բացումը նախատեսված է այսօր՝ ժամը 11:00-ին, Ազնավուրի հրապարակում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+9 + 13 +26 + 30
Կոտայքի լեռներ	+9 + 12 +25 + 28
Կոտայքի նախալեռներ	+18 + 21 +31 + 34
Գեղարքունիք	+11 + 15 +24 + 27
Լոռի	+10 + 14 +25 + 29
Տավուշ	+19 + 22 +30 + 33
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +24 + 27
Արագածոտնի նախալեռներ	+17 + 21 +30+ 35

Արարատ	+19 + 21 +35 + 37
Արմավիր	+19 + 22 +35 + 37
Վայոց ձորի լեռներ	+10 + 14 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 21 +34+ 37
Սյունիքի հովիտներ	+20+ 25 +36 + 38
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +27 + 30
ԼՂՀ	+19 + 21 +30 + 33
Երեւան	+25+ 27 +32 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.7.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*